ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2314, Կոտայքի մարզ, Մարմարիկ համայնք» 1-ին փողոց 19/1

17.12.2014թ. ԳՊ – 98

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ձեզ ենք ուղարկում ՀՀ Կոտայքի մարզի Մարմարիկ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի N 12 հերթական նիստը:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատ. Գ. Ասատրյան
Հեռ. 077-37-39-54

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ *<u>ՄԱՐՄԱՐԻԿ</u>* ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբեր 2014 թվականի N 34

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Մարմարիկ համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 10-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը:

1. Մարմարիկ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի N 34-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի եղանակով օտարելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝ 3 դեմ 0 ձեռնպահ 0

Վ.Տոնոյան
Գ. Պետրոսյան
Ռ .Բարսեղյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ *<u>ՄԱՐՄԱՐԻԿ</u>* ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**10 դեկտեմբեր** 2014 թվականի N 35-Ն

ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Մարմարիկ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի «2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 34-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Մարմարիկ համայնքի 2014 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2.51 ծրագրի 4891 հոդվածի նախկինում հաստատված 198.2 թիվը փոխարինել 0 թվով:

2. Մարմարիկ համայնքի 2014 թվականի վարչական բյուջեի այլ մշակութային կազմակերպություններ 08.2.4.51 ծրագրի 4239 (ընթանուր բնույթի հանրային ծառայություն) հոդվածի նախկինում հաստատված 500.0 թիվը փոխարինել 698.2 թվով:

Ավագանու անդամներ՝

Կողմ 3 դեմ 0 ձեռնպահ 0

Վ.Տոնոյան

Գ. Պետրոսյան

Ռ .Բարսեղյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Պետրոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <u>ՄԱՐՄԱՐԻԿ</u> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբեր 2014 թվականի N 36-Ն

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, թույլատրել օտարելու աճուրդ վաճառքի եղանակով, համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ գյուղատնտեսական նշանակության հողամասերը 1 լոտով 50% կադաստրային արժեքով համաձայն աղյուսակ 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

կողմ 3 դեմ 0 ձեռնպահ 0

Վ.Տոնոյան

Գ. Պետրոսյան

Ռ. Բարսեղյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Աղյուսակ 1

Գյուղնշանակության հողերի աճուրդ վաճառք

| լոտ | անվանումը | Գտնվելու վայրը | ծածկագիրը | Մակերեսը հա | Նպատակային նշանակությունը | հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /դրամ/ | սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղնշա-նակության | Մարմարիկ | | 0.6489 հա | գյուղատնտեսական | 3-րդ կարգ խոտհարք | Գյուղգործունեություն | 217382 | չկան |

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Ասատրյան

ՄԱՐՄԱՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ... 02286 ... Котайк ...